Պարույր Սևակ

Չկաս ու չես լինելու

Դու չկա՛ս, չկա՛ս…
Եվ առավոտը
Այնպես աղոտ է,
Ասես ցավոտ է:
…ու չե՞ս լինելու:
Եվ հորիզոնն է փակվում իմ առջև:
Նրան փակում է ո՛չ ամպի ճոթը,
Այլ քո զգեստի ամպեղեն փո՛թը:
Դու չկա՛ս, չկա՛ս…
Եվ օդ է դարձել
Այս համատարած անտեր կարոտը:
…ու չե՞ս լինելու:
Ու թվում է, թե լուցկի մոտեցնեմ՝
Պիտի բռընկի ինքը վառ օդը:
Դու չկա՛ս, չկա՛ս…
Ինչո՞ւ եմ սակայն քեզ զգում այնպե՛ս,
Այնպե՛ս եմ զգում, ինչպես երևի
Ոտից նոր զրկվածն զգում է ոտը,
Որ նո՛ւյնպես չկա
Ու չի՛ լինելու…

30.III.1959թ.

Մոսկվա